ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №ԲՄԱՊՁԲ-20-2/1-1

ք. Երևան 13.02.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ալելի» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Բաղդասարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի առավելագույն գինը կազմում է 97 000 000 (իննսունյոթ միլիոն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[32] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[32] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ալելի» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Սեբաստիա 23բն.14
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2052222066041001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01261978
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-20-2/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Թիրախներ վարժական հրաձգության համար (Թիրախներ)	Թիրախների շրջադիրը պատրաստվում է 3մմ±0,3մմ երեսպատված ԴՎՊ-ից ԳՕՍՏ 8904-2014-ի համապատասխան, երկկողմանի երեսպատված՝ ափսե մեծ, ափսե փոքր, պոպեռ մեծ, պոպեռ փոքր, № 5-ից մինչև № 11ա ներառյալ 0,3մմ±0,05մմ հաստությամբ մետաղական թիթեղով, իսկ մյուս (բացի թանզիֆային) թիրախները մետաղական ցանցով 3մմ±0,2մմ խտության: Մեկ թիրախի վրա մետաղական թիթեղի մեկ կողմի կտորները ոչ ավել երեք մասնաբաժին, իսկ №5, 5ա, ափսե մեծ, ափսե փոքր թիրախները մեկ մասնաբաժին: Թիթեղները (մետաղական ցանցը) երկկողմ ամրացվում են ԴՎՊ-ին մեկուսիչ ամրաններով, ամրանների հեռավորությունը միմյանցից ոչ ավել 40 սմ, իսկ №№ 5, 5ա, 6, ափսե մեծ, ափսե փոքր, պոպեռ մեծ և պոպեռ փոքր թիրախների մեկուսիչ ամրանների հեռավորությունը ոչ ավել 20 սմ: Ափսե մեծ, ափսե փոքր, պոպեռ մեծ, պոպեռ փոքր, № 5-ից մինչև № 10ա ներառյալ թիրախների դիմային կողմը ներկվում է 4 գույնով կոմուֆլյաժ երանգներով, որի նմուշը կտրամադրվի ՀՀ ԶՈՒ ՄՊՎ-ի կողմից : Ափսե մեծ, ափսե փոքր, պոպեռ մեծ, պոպեռ փոքր, №№ 5, 5ա, 6, 7, 8, 8ա, 9, 9ա, 9բ, 9գ, 10, 10ա թիրախների ոտքերը՝ փայտյա, 3x4±0,4սմ հաստությամբ՝ բարձրությունը ապահովվի թիրախի կայունությունը (չծալվի և չկոտրվի): № 11-ից մինչև № 27ա թիրախների ոտքերը՝ փայտյա, 4x5±0,4սմ հաստությամբ, բարձրությունը ապահովվի թիրախի կայունությունը (չծալվի և չկոտրվի): Բոլոր թիրախների համար թիրախից ներքև ոտքերի երկարությունը 30սմ±3սմ: Թույլատրվում է մինչև 1մ չափսեր ունեցող թիրախներում ±1սմ շեղումներ, իսկ ավելի մեծ չափսեր ունեցող թիրախներում ±2սմ: Թանզիֆային թիրախները առանց միջադիրի (ԴՎՊ-ի) և մետաղական ցանցի (պարկագործվածքը (ամրացված փայտյա շրջանակին, դիմային կողմը ներկված 2 գույնով կոմուֆլյաժ երանգներով, որի նմուշը կտրամադրվի ՀՀ ԶՈՒ ՄՊՎ-ի կողմից): Ոտքերի քանակը՝ ափսե մեծ, ափսե փոքր, պոպեռ մեծ, պոպեռ փոքր, №№ 5, 5ա, 6, թիրախների համար մեկ հատից, իսկ №№ 12ա, 13ա, 14ա, 20, 20ա, 22, 23, 23ա, 25ա թիրախների համար 4 հատից, թանզիֆային և մնացած թիրախների համար երկու հատից: Թիրախների շրջանակի փայտի հաստությունը 4x4±0,4սմ: Գիշերային հրաձգությունների անցկացման համար ափսե մեծ, ափսե փոքր, պոպեռ մեծ, պոպեռ փոքր, №№ 5-ից մինչև 10ա ներառյալ թիրախների քանակի 10 տոկոսի հաշվարկով հատկացվում է լուսային համակարգ (12-28վ լարման լամպ իր բնիկով, 1.5մ±10սմ երկարության, մինչև 1մմ կտրվածքի մակերեսով, ճկուն բազմաջիղ հաղորդալարով), իսկ 3 տոկոսի համար հատկացվում է ինքնատաքացվող ջերմատվիչներ յուրաքանչյուր թիրախի դիմային մակերեսի 50%-ից ոչ պակաս տաքացնելու հաշվարկով: Թիրախների չափսերը՝ ՀՀ ՊՆ 22.10.1997թ. N581 հրամանով հաստատված «Հրաձգության դասընթաց» առաջին գրքի պահանջներին համապատասխան:

Ծանոթություն. Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվում է մատակարարի միջոցներով ք. Երևան, Թևոսյան 14 հասցեով, ՀՀ ՊՆ 42285 զորամասի կենտրոնական պահեստ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/մ	Առավելագույն գումար (ՀՀ դրամ)	Մատակարարման ժամկետ
1	Թիրախներ վարժական հրաձգության համար (Թիրախներ)	դրամ	97000000	Ապրանքների մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրերով սահմանված ժամկետներում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարու-թյան 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը պարբերության պահանջները

Ծանոթություն՝ Ապրանքի մատակարարումը կիրականացվի ՀՀ ԶՈՒ ՄՊ վարչության կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ նշված առավելագույն գնի սահմաններում

Թիրախների միավորի գներ

Հ/Հ	Անվանումը	Չափման միավոր	Միավորի գին (ՀՀ դրամ)
1	Պոպեռ մեծ	հատ	3560
2	Պոպեռ փոքր	հատ	1830
3	Ափսե մեծ	հատ	1180
4	Ափսե փոքր	հատ	1020
5	Կրծքային ֆիգուր շրջանագծերով (թիրախ N4)	հատ	480
6	Գլխային ֆիգուր (թիրախ N5)	հատ	1130
7	Գլխային ֆիգուր (թիրախ N5ա)	հատ	1020
8	Կրծքային ֆիգուր (թիրախ N6)	հատ	2160
9	Կրծքային ֆիգուր (թիրախ N6բ,եռաչափ)	հատ	8100
10	Գոտկային ֆիգուր (թիրախ N7)	հատ	4100
11	Հասակով մեկ ֆիգուր (թիրախ N8)	հատ	6260
12	Հասակով մեկ ֆիգուր (թիրախ N8ա)	հատ	6260
13	Ձեռքի հակատանկային նռնականետ (թիրախ N9)	հատ	6480
14	Հակատանկային նռնականետ խրամատում (թիրախ 9ա)	հատ	3240
15	ՀՏԿՀ կրակային դիրքում(թիրախ N9բ)	հատ	3560
16	ՀՏԿՀ հաշվարկ խրամատում (թիրախ N9գ)	հատ	4860
17	Ձեռքի գնդացիր (թիրախ N10)	հատ	3240
18	Գնդացրային հաշվարկ (թիրախ N10ա)	հատ	6260
19	Հակատանկային (անհետգլոր)հրանոթ (ՀՏԿՀ վերգետնյա կայանք թիրախ N11)	հատ	10800
20	Հակատանկային(անհետգլոր) հրանոթ (ՀՏԿՀ վերգետնյա կայանք թիրախ N11 թանզիֆային)	հատ	2930
21	Հակատանկային (անհետգլոր) հրանոթ (ՀՏԿՀ վերգետնյա կայանք խրամատում թիրախ N11ա)	հատ	8640
22	Հակատանկային(անհետգլոր)հրանոթ(ՀՏԿՀ վերգետնյա կայանք խրամատում թիրախ N11ա թանզիֆային)	հատ	2930
23	Տանկ (թիրախ N 12)	հատ	64800
24	Տանկ (թիրախ N 12 թանզիֆային)	հատ	15590
25	Տանկ (թիրախ N 12ա)	հատ	116640
26	Տանկ (թիրախ N 12ա թանզիֆային)	հատ	34490
27	Տանկ խրամատում (թիրախ N 12բ)	հատ	22680
28	Տանկ խրամատում (թիրախ N 12բ թանզիֆային)	հատ	4910
29	Տանկ (թիրախ N 12գ,եռաչափ)	հատ	160920
30	Տանկ (թիրախ N 12գ թանզիֆային,եռաչափ)	հատ	45360
31	Զրահափոխադրիչ (թիրախ N 13)	հատ	28080

32	Զրահափոխադրիչ (թիրախ N 13 թանզիֆային)	հատ	5380
33	Զրահափոխադրիչ (թիրախ N 13ա)	հատ	37800
34	Զրահափոխադրիչ (թիրախ N 13ա թանզիֆային)	հատ	6420
35	Զրահափոխադրիչ (թիրախ N 13բ)	հատ	12520
36	Զրահափոխադրիչ (թիրախ N 13բ թանզիֆային)	հատ	2930
37	Հետևակի մարտական մեքենա (զրահամեքենա) (թիրախ N 14)	հատ	52380
38	Հետևակի մարտական մեքենա (զրահամեքենա) (թիրախ N 14 թանզիֆային)	հատ	7840
39	Հետևակի մարտական մեքենա (զրահամեքենա) (թիրախ 14ա)	հատ	99360
40	Հետևակի մարտական մեքենա (զրահամեքենա) (թիրախ N14ա թանզիֆային)	հատ	21730
41	Հետևակի մարտական մեքենա (զրահամեքենա) խրամատում (թիրախ N 14բ)	հատ	11340
42	Հետևակի մարտական մեքենա (զրահամեքենա) խրամատում (թիրախ N 14բ թանզիֆային)	հատ	3400
43	Հետևակի մարտական մեքենա զրահամեքենա(թիրախ N14գ,եռաչափ)	հատ	124200
44	Հետևակի մարտական մեքենա զրահամեքենա(թիրախ N14գ թանզիֆային,եռաչափ)	հատ	23620
45	Զրահակափարիչ (թիրախ N 15)	հատ	13500
46	Հրակնատ շինությունում (թիրախ N 16)	հատ	11340
47	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա (թիրախ N 17)	հատ	22680
48	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա (թիրախ N 17 թանզիֆային)	հատ	5850
49	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա (թիրախ N 17ա)	հատ	32400
50	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա (թիրախ N 17ա թանզիֆային)	հատ	7740
51	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա խրամատում (թիրախ N 17բ)	հատ	12420
52	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա խրամատում (թիրախ N 17բ թանզիֆային)	հատ	3400
53	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա (թիրախ N 17գ եռաչափ)	հատ	43200
54	Անհետգլոր հրանոթ (ՀՏԿՀ) մեքենայի վրա (թիրախ N 17գ թանզիֆային, եռաչափ)	հատ	11340
55	ՀՏԿՀ զրահափոխադրիչի վրա(թիրախ N18)	հատ	44280
56	ՀՏԿՀ զրահափոխադրիչի վրա(թիրախ N18 թանզիֆային)	հատ	5850
57	ՀՏԿՀ զրահափոխադրիչի վրա խրամատում (թիրախ N18ա)	հատ	16740
58	ՀՏԿՀ զրահափոխադրիչի վրա խրամատում (թիրախ N18ա թանզիֆային)	հատ	3960
59	Հրետանային հրանոթ (թիրախ N 19)	հատ	24840
60	Հրետանային հրանոթ (թիրախ N 19 թանզիֆային)	հատ	5380
61	Հրետանային հրանոթ խրամատում (թիրախ N 19ա)	հատ	11340
62	Հրետանային հրանոթ խրամատում (թիրախ N19ա թանզիֆային)	հատ	2930

63	Ինքնագնաց հրթիռային կայանք (թիրախ N20)	հատ	86400
64	Ինքնագնաց հրթիռային կայանք (թիրախ N20 թանգիֆային)	հատ	27300
65	Ինքնագնաց հրթիռային կայանք երթային դրությունում (թիրախ N20ա)	հատ	81000
66	Ինքնագնաց հրթիռային կայանք երթային դրությունում (թիրախ N20ա թանգիֆային)	հատ	24570
67	Հետևակ մեքենայի վրա (թիրախ N22)	հատ	93960
68	Հետևակ մեքենայի վրա (թիրախ N22 թանգիֆային)	հատ	24570
69	Ինքնագնաց հրետանային կայանք (թիրախ N23)	հատ	61560
70	Ինքնագնաց հրետանային կայանք (թիրախ N23 թանգիֆային)	հատ	9920
71	Ինքնագնաց հրետանային կայանք (թիրախ N23ա)	հատ	86400
72	Ինքնագնաց հրետանային կայանք (թիրախ N23ա թանգիֆային)	հատ	22680
73	Ինքնագնաց հրետանային կայանք խրամատում(թիրախ N23բ)	հատ	15660
74	Ինքնագնաց հրետանային կայանք խրամատում (թիրախ N23բ թանգիֆային)	հատ	4910
75	Ինքնագնաց հրետանային կայանք (թիրախ N23գ, եռաչափ)	հատ	129600
76	Ինքնագնաց հրետանային կայանք (թիրախ N23գ, թանգիֆային, եռաչափ)	հատ	18900
77	Ուղղաթիռ (թիրախ N 25)	հատ	56160
78	Ուղղաթիռ (թիրախ N 25 թանգիֆային)	հատ	7840
79	Ուղղաթիռ (թիրախ N 25ա)	հատ	106920
80	Ուղղաթիռ (թիրախ N 25ա թանգիֆային)	հատ	32130
81	Առանց գլխամասի հրթիռ՝ արձակման կայանքի վրա (թիրախ N26)	հատ	64800
82	Ռադիոկայան ավտոմեքենայի վրա (թիրախ N27)	հատ	61560
83	Ռադիոկայան ավտոմեքենայի վրա խրամատում (թիրախ N27ա)	հատ	31860
Ընդամենը՝			2320320

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-20-2/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ՀՀ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
1	Թիրախներ վարժական հրաձգության համար (Թիրախներ)	35211100/501	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ալելի» ՍՊԸ

Տնօրեն

Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԱՊՁԲ-20-2/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԲՄԱՊՁԲ-20-2/1-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն